



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԵՏ ՍՏՈՐԱԳՐԵՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ  
29.05.2014



Մույն թվականի մայիսի 29-ին Հայաստանի բանկերի միությունում տեղի ունեցավ մամլո ասուլիս Հայաստանի բանկերի միության նախագահ Մամվել Ճզմաչյանի, Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկի գլխավոր գործադիր տնօրեն Հակոբ Անդրեասյանի և <<Հայաստանում ֆրանսիական համալսարան հիմնադրամի>> ռեկտոր Ժան-Ժակ Մոնտուայի մասնակցությամբ, որը նվիրված էր Հայաստանում ֆրանսիական

համալսարանում «Ֆինանսներ» մասնագիտության «Բանկային գործ և ապահովագրություն» մասնագիտացմամբ բակալավրիատի ներդրմանը:

Այս նոր բակալավրիատը Հայաստանում ֆրանսիական համալսարանի գործընկեր Ժան Մուլեն Լիոն 3 համալսարանի «Բանկային գործ և ապահովագրություն» մասնագիտացմամբ բակալավրիատի տեղայնացումն է Հայաստանում: Բակալավրիատում ուսումնառության ավարտին միաժամանակ շրջանավարտներին շնորհվելու են հայկական բակալավրի և ֆրանսիական լիսանսի (licence) պետական դիպլոմներ:

Հայաստանում առաջին անգամ նման մասնագիտացված բակալավրիատի ներդրումը նախատեսված է արդեն 2014թ. սեպտեմբերից և իրականացվում է հայ-ֆրանսիական միջպետական համագործակցության շրջանակում, ինչի մասին հիշատակվել է Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Օլանդի վերջերս Հայաստան կատարած պետական այցի ժամանակ: Այն իրականացվում է ՀՀ կենտրոնական բանկի և Հայաստանի բանկերի միության հետ համագործակցաբար: Այդ նպատակով ստեղծվել են համատեղ աշխատանքային խմբեր ֆրանսիական առարկայական ծրագրերի՝ Հայաստանի բանկային ոլորտի մասնագիտությունների գծով գիտելիքների և ունակությունների ձեռք բերմանն անհրաժեշտ տեղայնացման համար: Նոր մասնագիտացված բակալավրիատի ներդրման բացառիկ գործընկերն Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկն է:

«Բանկային գործ և ապահովագրություն» մասնագիտացմամբ բակալավրիատի շրջանավարտները կարող են աշխատել որպես ֆինանսական մենեջեր, ֆինանսական և ապահովագրական գործակալ, ապահովագրության և ֆինանսների գծով խորհրդատու, վարկային մենեջեր, բանկային և ապահովագրական պրոդուկտների վաճառքի գծով մենեջեր, բանկերի և ապահովագրական ընկերությունների հաճախորդների սպասարկման պատասխանատու և այլն:

Ուսումնառությունը բակալավրիատում տևում է 4 տարի և ավարտվում է արտադրական պրակտիկայով, որի արդյունքում ուսանողներն անցնում են աշխատանքի: Ըստ 2013 թվականին անցկացված հարցման տվյալների, ՀՖՀՀ-ի շրջանավարտների շուրջ 30%-ը աշխատում են ՀՀ բանկային և ապահովագրության ոլորտներում:

Այդ առիթով ՀԲՄ-ի նախագահ Սամվել Ճզմաչյանը ասաց.

- Հայաստանի բանկերի միությունն արժևորում է Հայաստանում ֆրանսիական համալսարանում «Բանկային գործ և ապահովագրություն» մասնագիտացմամբ բակալավրիատի ներդրումը, որը նախատեսված է արդեն ընթացիք տարվա սեպտեմբերից: Մենք կարևորում ենք կրթության որակը, բանկային ոլորտը որակյալ աշխատողներով համալրելու անհրաժեշտությունը: Հայաստանի բանկերի միությունը կձգտի, որպեսզի Հայաստանում առաջին անգամ նման մասնագիտացված բակալավրիատի ուսանողների մոտ ձևավորվի խորացված գիտելիքներ և բարձր պրոֆեսիոնալ հմտություններ բանկային գործունեության և ապահովագրության ոլորտներում: Մասնավորապես, այդ գործում միությունը կներգրավի տեսական և պրակտիկ լավագույն մասնագետներին, որոնք ուսանողների համար կանցկացնեն մաստեր-դասընթացներ և գործնական պարապմունքներ: ՀԲՄ-ն պատրաստ է նաև կազմակերպել նորաստեղծ բակալավրիատի ուսանողների այցելություններ բանկեր և նրանց ստորաբաժանումներ, իսկ ուսումնառության 2-րդ փուլում՝ նաև արտադրական պրակտիկայի անցկացումը տարբեր ֆինանսական կառույցներում, որի ընթացքում ուսանողները հնարավորություն կստանան գործնականում կիրառել համալսարանում ստացած գիտելիքները և ձեռք բերել մասնագիտական գործունեության փորձառություն:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԱՅԱՑԱՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

05.06.2014

Սույն թվականի հունիսի 5-ին Հայաստանի բանկերի միության գրասենյակում տեղի ունեցավ «Անշարժ գույքի շուկայի վերլուծության» երկրորդ տպագիր թողարկման պաշտոնական շնորհանդեսը: Հայաստանի բանկերի միության և Օլիվեր Գրուպ գնահատման գործակալության միջև ստորագրված համագործակցության հուշագրի շրջանակներում ԶԼՄ-ներին ներկայացվեց անշարժ գույքի հիմնական սեզմենտի՝ բնակարանների արժեքային տվյալների վերլուծությունը՝ 2013թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին թվով 22331 հատ առաջարկների հիման վրա:



Շնորհանդեսի ընթացքում Մամվել Ճզմաչյանը իր ելույթում մասնավորապես ասաց.

- 2013թ-ի հոկտեմբերի 4-ին Հայաստանի բանկերի միությունը և Օլիվեր Գրուպ ՄՊԸ-ն կնքեցին մտադրությունների հուշագիր առ այն, որ կողմերը համագործակցելու են անշարժ գույքի շուկայում տեղի ունեցող զարգացումների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման շուրջ: Մասնավորապես, Օլիվեր

Գրուպ-ը մեզ պարբերաբար տրամադրելու է Հայաստանի անշարժ գույքի շուկայում տիրող իրավիճակի մասին վերլուծություններ, որոնք մենք փոխանցելու ենք առևտրային բանկերին՝ որպես ուղենիշ:

Այսօր բանկերը համագործակցում են անշարժ գույքի շուկայի բազմաթիվ գնահատողների հետ, և այս վերլուծությունները որպես հավելյալ տեղեկատվություն կլինեն նրանց համար: Եվ այսօր Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում հերթական վերլուծությունը, որը կատարվել է անցյալ տարվա ընթացքում «Գինդ» շաբաթաթերթում 22 հազար 331 բնակարանների առաջարկների հիման վրա, որոնք մշակվել են հատուկ համակարգչային ծրագրի միջոցով...

Իսկ ընդհանրապես Հայաստանի անշարժ գույքի շուկան իսկական գլուխկոտրուկ է հասարակ մահկանացուների համար: Այսպես, համաձայն «Օլիվեր Գրուպ»-ի, մայրաքաղաքում բնակարանների գներն անցյալ տարվա ընթացքում նվազել են միջինը 4%-ով, իսկ, ըստ ԿԱ Անշարժ գույքի կադաստրի պետկոմիտեի, ընդհակառակը, աճել են 5,4%-ով, կազմելով 271,3 հազ. դրամ, նախորդ տարվա 257,3 հազարի դիմաց:

Ինչպես հասկանալի է, գնահատման տարբերությունները զալիս են այս կամ այն հետազոտության մեթոդաբանությունից: Այսպես, «Օլիվեր Գրուպ» ՄՊԸ-ի հիմնադիր Հրաչ Հակոբյանը գտնում է, որ իրենց մոտեցումն ավելի իրական է, քան... իրականում կնքված գործարքների հաշվառումը, որը, մասնավորապես, հիմք է ընդունում ԿԱ Ազգային վիճակագրական ծառայությունը: Ամբողջ նրբությունը նրանում է, որ անշարժ գույքի առք ու վաճառքի մասնակիցները գործարքի նոտարական ձևակերպման ժամանակ հետաքրքրված են «ցույց տալ» շատ ավելի նվազ գին, քան իրականն է, որպեսզի «թեթևացնեն» վճարվող տուրքերն ու հարկերը: Եվ դրանք հիմք ընդունելն անհաշվենկատ է: Իսկ վաճառողի գնային առաջարկությունը՝ նույնիսկ հաշվի առնելով հետագայում բանակցությունների արդյունքում դրա իջեցումը, ավելի մոտ է գործարքի իրական գնին:



26.06.2014



Վերջերս ՌԴ նախագահի խորհրդատու Սերգեյ Գլազյեվը առաջարկել էր կիրառել 15 գործողություններ, որոնք կպաշտպանեն Ռուսաստանի տնտեսությունը ԱՄՆ-ի և ԵՄ-ի պատժամիջոցներից: Ըստ Գլազյեվի, անհրաժեշտ է կրճատել ԱՄՆ դոլլարի շրջանառությունը ՌԴ-ի տնտեսությունում՝ ընդ որում, փոփոխությունները կառնչվեն ն՝ ֆինանսական գործառույթներին պետական հատվածում, ն՝ մասնավոր ընկերությունների հետ, ն՝ նույնիսկ բնակչության մասով:

Այսպես, պետական ընկերություններն ու պետական բանկերը, Գլազյեվի պատկերացմամբ, պետք է հնարավորություն ստանան փոխարինել արևմտյան բանկերի արտարժույթային վարկերը ռուբլով վարկերի: Դա ֆինանսավորելու է ՌԴ ԿԲ-ն, թողարկելով նպատակային էմիսիա, իսկ «Վնեշէկոնոմբանկը» կտեղաբաշխի այն: Պահանջվում է նաև կրճատել ՌԴ-ի ֆինանսական սեկտորի կախվածությունն արտասահմանյան ենթակառուցվածքից և տնտեսության կախվածությունը դոլլարային հաշվարկներից: Պետք է նաև սահմանափակել առևտրային բանկերի արտարժույթային դիրքը, ինչը կկանխի սպեկուլյացիաները ռուբլով և կապիտալի արտահոսքը: Բանկերը ստիպված կլինեն ստեղծել 100%-անոց պահուստներ ոչ ռեզիդենտների պարտքային պարտավորությունների մասով:

Բացի դրանից՝ և դա մեզ համար ամենահետաքրքրականն է՝ Գլազյեվը խորհուրդ է տալիս Մաքսային միության (Եվրասիական տնտեսական միության՝ ԵԱՏՄ) երկրների հետ Ռուսաստանի հաշվարկներում անցնել ազգային արժույթների: Այսպիսով, Գլազյեվի ռադիկալ ծրագիրն առաջարկում է ՌԴ Ֆիննախին կառուցել Արևմուտքից անկախ տնտեսություն և դուրս մղել դրանից դոլլարը: Ընդ որում, ակնհայտ չանցնող առաջարկություններից բացի, ծրագրում կան նաև բավականաչափ իրական և օգտակարները՝ օրինակ, հաշվարկներում ազգային արժույթի դերի բարձրացում, չնայած դա այդքան էլ հեշտ չէ: Հայտնի է, որ ԵվրԱզԵՄ-ի երկրների միջև առևտրային հաշվարկների միայն կեսն է կատարվում ռուբլով:

Ընդհանուր առմամբ, տնտեսության ապադոլլարացումն առողջ և հրատապ գաղափար է ոչ միայն պատժամիջոցներից տուժող Ռուսաստանի համար: Հայաստանում, օրինակ, երկար տարիներ պայքար է տարվում տնտեսության դոլլարացման դեմ, բայց մինչև գլոբալ ճգնաժամը որոշ հաջողություններից հետո ներկա պահի դրությամբ դոլլարացման մակարդակը մեր երկրում կազմում է բավականին բարձր 68%: Այնպես որ, եթե ԵԱՏՄ-ի երկրները փոխադարձ

հաշվարկներում ավելացնեն իրենց արժույթների կշիռը, դա միայն օգուտ կբերի նրանց, քանի որ կհանգեցնի արտարժույթների դիվերսիֆիկացիայի և համապատասխանաբար կկրճատվեն արժույթային ռիսկերը: Բացառված չէ նաև, որ այս նախաձեռնության հաջող իրականացման դեպքում նշված ինտեգրացիոն խմբավորման տարածքում հեռանկարում կներդրվի ընդհանուր միասնական արժույթ: Համենայնդեպս, Գլազյեվը իր ենթագիտակցության մեջ ակնհայտորեն հաշվի է առնում այդ, թեկուզ և ոչ մոտակա, հեռանկարը: Գոնե այս պահին հայտնի է, որ ԵԱՏՄ-ն հետաձգել է միասնական ֆինանսական (ինչպես նաև նավթագազային) շուկայի ստեղծումը մինչև 2025 թվականը, բայց ԵԱՏՄ-ի երկրների փոխադարձ հաշվարկներում ազգային արժույթների մասնաբաժինը կարող է սկսել ավելանալ արդեն այսօրվանից:

Իմիջիայլոց, ս.թ. մայիսի կեսերին հայտնի դարձավ, որ ՌԴ Ֆիննախը պատրաստ է դրական եզրակացություն տալ ՌԴ կառավարության այն գաղափարին, որը ենթադրում է ավելացնել արտահանման պայմանագրերով ռուբլով հաշվարկների ծավալը և գտնում է դա միանգամայն իրագործելի (ի դեպ, ՌԴ ֆինանսների նախկին նախարար Ալեքսեյ Կուդրինը բացարձակապես չի կիսում Գլազյեվի գաղափարները երկրում դոլլարի շրջանառության կրճատման վերաբերյալ): ՌԴ-ի բանկային համակարգը նույնպես պատրաստ է բացառել (կրճատել) արտարժույթն արտասահմանյան հաշվարկներում, բայց ռուբլով հաշվարկների ավելացումը կախված է նաև ռուսական ընկերությունների արտասահմանյան կոնտրագենտների-գործընկերների նախասիրություններից, քանի որ վերջիններս կարող են ուղղակի չցանկանալ վճարել ռուբլիներով: Այսպիսով, խոսքը գնում է ռուբլու դերի բարձրացման հնարավորությունների մասին:

Իսկ ինչպե՞ս է դա կատարվելու զուտ տեխնիկապես: Հասկանալի է, որ եթե արտաքին առևտրային գործարքում վճարման և ստացման արժույթները տարբեր են, ապա առաջանում է լրացուցիչ բանկային գործառնություն, որը կապված է արժույթի փոխանակման կոնվերտացիայի, հետ: Բայց դա, ինչպես գտնում են ՌԴ Ֆիննախում, ոչ մեծ ծախսեր են: Արտահանողը կստանա իր պայմանագրերով ռուբլիներ, ինչից հետո կարող է անել դրանց հետ ինչ կամենում է՝ եթե նրան պետք են ԱՄՆ դոլլարներ, փոխարկել ռուբլին այդ արժույթով և այլն: Եվ այդպիսի պայմանագրեր, ինչպես կարծում են ՌԴ Ֆիննախում, պետք է լինեն շատ ավելի, քան այսօր է: Արդյունքում կստացվի, այսպես ասենք, մի քիչ անհարմար և մի քիչ էլ թանկ, բայց շատ ավելի անվտանգ: Իհարկե, բոլորը սովորել են ապրանքի դոլլարային գնանշումներին, իսկ բոլոր բորսայական ապրանքներն առանց բացառության գնանշվում են ԱՄՆ դոլլարով: Եվ ի՞նչ:

ՌԴ տնտեսական զարգացման նախարար Ալեքսեյ Ուլյուկայեվի կարծիքով, Ռուսաստանը չի կարող ամբողջովին հրաժարվել դոլլարից որպես հաշվարկման արժույթից իր գործընկեր երկրների հետ: «Կան դիրքեր, որոնցով հնարավոր չէ հրաժարվել դոլլարից, բայց կան և այնպիսիները, որոնցով մենք պետք է նեղենք դոլլարը և փոխարինենք այն չինական յուանով, հարավկորեական վոնով, վյետնամական դոնգով և այլն: Դա նորմալ է այն երկրների միջև, որոնք ունեն առևտրա-ներդրումային հարաբերությունների մեծ ծավալներ», - ասել է ռուս նախարարը:

Այսպիսով, մենք գործ ունենք ՌԴ ֆինանսական համակարգի ակնհայտ վերակողմնորոշման հետ ասիական արժույթների ուղղությամբ: Հայտնի է նաև, որ «ԲԲԻԿՄ» (Բրազիլիա, Ռուսաստան, Հնդկաստան, Չինաստան, Հարավաֆրիկյան Հանրապետություն) խմբի անդամ երկրները պատրաստում են նոր արժույթային համակարգի ներդրում:



## ԲԱՆԿԵՐՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՉԵՌՔ ՄԵԿՆԵՑԻՆ ՔԵՍԱԲԱՀԱՅԵՐԻՆ

27.06.2014



ՀՀ ԿԲ-ի նամակում, ուղղված Հայաստանի բանկերի միությանը, շնորհակալություն է հայտնվում ՀԲՄ-ին և առևտրային բանկերին Քեսաբահայերի օգնության շրջանակներում կատարված նվիրաբերությունների ու աջակցության համար:

Բազմաթիվ առևտրային բանկեր, արձագանքելով ՀՀ ԿԲ-ի ս.թ. ապրիլյան կոչ-խնդրանքին, ուղղակիորեն

կամ իրենց աշխատակազմերի միջոցով կատարել են համապատասխան նվիրաբերություններ: Առատաձեռն նվիրատվությունների շնորհիվ հաջողվեց հավաքել \$33, 515, որից \$22,087-ը օգտագործվել է աջակցելու համար ավելի քան 1000 Քեսաբահայերի Սիրիայում և Լիբանանում: Տարբերությունը այս պահին օգտագործվում է այլոց ևս աջակցելու նպատակով:

Բանկերի ուշադրությունն ենք հրավիրում Ջինիշյան հիշատակի հիմնադրամի միջանկյալ հաշվետվությանը, որը հրապարակված է նաև [www.jinishian.org](http://www.jinishian.org/files/InterimReportKessab.pdf) (<http://www.jinishian.org/files/InterimReportKessab.pdf>, <http://www.jinishian.org/files/List%20of%20beneficiaries.pdf>) կայքում:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.

Հայաստանի բանկերի միությունը Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի միություն է: Միությունն իրավաբանական անձ է, որը հանդիսանում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացած շահույթը մասնակիցների միջև չբաշխող ոչ առևտրային կազմակերպություն:

Միության հիմնական խնդիրներն են՝

- պաշտպանել և ներկայացնել Միության անդամների շահերը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, հասարակական և միջազգային կազմակերպություններում,
- նպաստել միջբանկային կապերի զարգացմանը և ամրապնդմանը, համակարգել Միության անդամների գործունեությունը՝ համատեղ երկարաժամկետ ծրագրերի մշակման և իրականացման համար,
- մասնակցել Հայաստանի Հանրապետությունում բանկային և ֆինանսավարկային գործունեության մասին օրենսդրական և այլ նորմատիվային ակտերի նախագծերի մշակմանը և դրանց հասարակական փորձաքննությանը,
- մշակել և իրականացնել ծրագրեր՝ բանկային կադրերի վերապատրաստման և որակավորման բարձրացման, ինչպես նաև որակավորման ու մասնագիտական համապատասխանության ստուգման ուղղությամբ,
- կազմակերպել սեմինարներ, կոնֆերանսներ և գիտաժողովներ,
- իրականացնել Միության անդամների ընդհանուր շահերից բխող այլ խնդիրներ:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել՝ +374 10 52 77 31, Էլ. փոստ՝ [uba@uba.am](mailto:uba@uba.am):